


308(54)

2-79


ՀՈՒՄՈՐԻՅԱԼ

ՄԵՆ ՈՒՆԻՏ ԶԻՆԱՎԵՐԱԸ

ՅԵՎ



ԿՈՆՏՐԱԿՏ



9(51)
9-76

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Ե. ՉՈՓՈՒՐՅԱՆ

ՄԵՐ ՈՐԵՐԻ ՉԻՆԱՍՏԱՆԸ

Յ Ե Վ

ՉԻՆ-ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՅԵՐԿԱԹԳԾԻ ԿՈՆՖԼԻԿՏԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑՄԱՐՍԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն - 1929



A $\frac{1}{1507}$

ՊԵՏՐՈՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Հր. № 1057
Պատվ. № 911
Գրատ. № 5735 (բ) — Տիրած 3000

ՄԵՐ ՈՐԵՐԻ ՁԻՆԱՍՏԱՆԸ

Հեապատերազմյան կապիտալիզմի «չերբորդ շըր-
ջանը» — Գաղութները «չերբորդ շըջանում» — Չինաս-
տանի հեղափոխական շարժման ընթացքը — Չինական
բուրժուազիայի «հաղթանակը» — Կոմիսներնը չինա-
կան հեղափոխության մասին — Հոդային հարցը Չի-
նաստանում — Միացյալ Չինաստանը — Չինական
բուրժուազիան և իմպերիալիզմը — Նանկինի կառա-
վարությունը և Միացյալ Նահանգները — Իմպերիա-
լիստական մրցակցությունները Չինաստանում — Չի-
նական գեներալները յգայքարը — Չինաստանի ար-
դյունաբերության գրությունը — Արտաքին առևտու-
րը — Հեղափոխական նոր վերելքի նախորդակին — Չին
կոմկուսի անելիքները:

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԿԸՊԻՏԱԼԻՉՄԻ «ՅԵՐՐԱՐԳ
ԾՐՋԱՆԸ»

Իմպերիալիստական պատերազմից հետո
կապիտալիզմի ընդհանուր կրիզիսն արտա-
հայտվել է յերեք տարբեր շրջաններով: Ա-
ռաջին շրջանում, յերբ կապիտալիզմի կրի-
զիսը սուր բնույթ ստացավ, յերկրորդ շըր-
ջանում, յերբ կապիտալիզմը մասնակի կա-
յունացման յենթարկվեց, յերրորդ՝ ներկա
շրջանում «կապիտալիստական տնտեսու-
թյունը, և զուգահեռաբար նաև Խորհրդա-
յին Միության տնտեսությունն անցել են
նախապատերազմյան շրջանից (վերակա-
ռուցման շրջանը—նոր տեխնիկայի հիման
վրա տնտեսության սոցիալիստական ձևե-
րի աճումը ԽՍՀՄ-ում): Կապիտալիստական
աշխարհում տեխնիկան արագ կերպով զար-

դանում ե, աճում են կարակները, տրեստները, պետական կապիտալիզմի տենդենցները, միկնուշն ժամանակ ուժեղ կերպով զարգանում են համաշխարհային տնտեսութեան հակասությունները, իրրև անմիջական հետևանք կապիտալիզմի կրիզիսի նախընթաց շրջանների ստեղծած դրութեան (կրճատված շուկաներ, Խորհրդային Միութիւն, գաղութային շարժումներ, իմպերիալիզմի ներքին հակասությունների աճում): Այս չերրորդ շրջանը, վոր առանձնապես սրել ե արտադրական ուժերի աճման և շուկաների կրճատման միջև դոյութիւն ունեցող հակասութիւնը, անխուսափելի չե դարձնում իմպերիալիստական պետութիւնների միջև իմպերիալիստական պատերազմի մի նոր ֆազը, Խորհրդային Միութեան դեմ իմպերիալիստական նոր պատերազմը, իմպերիալիստների և նրանց ինտերվենցիաների դեմ ազգային ազատագրական պատերազմները և դասակարգային հսկա պայքարները: Այդպիսով սրվում են միջազգային հակասութիւնները (հակասութիւններ կապիտալիստական չերկրների և ԽՍՀՄ միջև — Հլուսիսային Չինաստանի

գրավումն իբրև նրա անդամահատության և միլիտարիստական կռիվների սկզբնավորութուն) և կապիտալիստական յերկրների ներքին հակասութունները (բանվոր դասակարգի մասսաների հեղափոխականացում, դասակարգային պայքարի սրում) շվեաչազերծելով զազութային շարժումները (Չինաստան, Հնդկաստան, Յեզիպտոս և Սիրիա): Այս շրջանը կապիտալիզմի ժամանակավոր ստաբիլիզացիայի հակասութունների նոր զարգացումով՝ անխուսափելիորեն հանդում և այդ ստաբիլիզացիայի խախտման և կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի սրման ծանրանալուն» (Կոմիցներնի վեցերորդ կոնգրեսի՝ միջազգային դրուքյան յեվ Կոմիցներնի անելիքների մասին բանաձեւից):

ԳՆՂՈՒԹՆԵՐԸ «ՅԵՐՐՈՐԳ» ՉՐՋԱՆՈՒԹ

Այսպես, ուրեմն, այն ժամանակ, յերբ մի վորոշ ժոմենտում և յերկրում, քվում և, քե սոցիալական ուժերի հավասարակշռութուն և սեղծվել, մի այլ սեղում կրիզիսը սուր կերպով արժանայսվում և, սպառնալից չափեր և ընդունում. Այդ յերևույթն առավելապես նկատելի չի զազութային և կիսազազու-

թային չերկրներում, վորտեղ վերջին տարիների ընթացքում հեղափոխական սոցիալիզմներ, մակընթացություններ և տեղատվություններ շուտ-շուտ իրար են հաջորդում, ստեղծելով լարված դրություն:

Կոմիստերնի վեցերորդ կոնգրեսսը գաղութային և կիսագաղութային չերկրների հեղափոխական շարժման մասին ընդունած իր բանաձևում ընդգծում է, վոր «գաղութներն իրրև շահագործման որչեկտ, վորից չի կարող հրաժարվել իմպերիալիզմը, ավելի քան առաջները, դառել են կոնֆլիկտների և պատերազմների աղբյուր իմպերիալիստների միջև: Մյուս կողմից գաղութների ու կիսագաղութների հսկայածավալ աշխարհը մասսայական հեղափոխական շարժումների անհանգչելի ոջախ է դառել: Այս չերեութը, վորի պատմական նշանակությունը հսկայական է, մասամբ արդյունք է այն փոփոխությունների, վորոնք առաջացել են իմպերիալիստական պատերազմի ժամանակ, և հետո՝ գլխավոր գաղութային և կիսագաղութային չերկրների ներքին դրության, նրանց սոցիալ-տնտեսական ստրուկտուրայի մեջ (կապիտալիստական

անդյունաբերական տարրերի ուժեղացում, ագրարային կրիզիսի խորացում, պրոլետարիատի կազմակերպութեան սկզբնավորութիւնն և աճում, գյուղացիական լայն մասսաների չքավորացում և այլն), մասամբ նաև այն փոփոխութեաններին, վերոնք կատարվել են միջազգային դրութեան մեջ»:

«... Այս բոլորը նշանակալից չափով արագացրին գաղութային և կիսագաղութային չեղերների ժողովրդական հսկայական մասսաների քաղաքական դարձմանքը և առաջացրին հեղափոխական մեծ յելուչիւնների մի շարք, վերոնք մեծ մասամբ որդիանալ և սերտ կերպով միացրին հակախմպերիալիստական ազատագրական պայքարը չեղերի ներսում դասակարգային ուժերի զարգացմանը» (Բանաձեւի առաջաբանի Ա. կէտք):

Գաղութային և կիսագաղութային չեղերների արտաքին և ներքին սոցիալ-տնտեսական զարգացման այս հիմնական գնահատականը հնարավորութիւնն և տալիս պարզ պատկերացում ունենալ Չինաստանի ներկա դրութեան, հեղափոխութեան առաջին շրջանի վերջանալուց հետո (Կանտոնի

կոմմունան) անցած ժամանակամիջոցում կատարված դեպքերի, ներկա քաղաքացիական կոնֆլիկտի բովանդակութչան, Ձինաստանում իմպերիալիստական պետութչունների ներհակութչունների և մաստաների հեղափոխական շարժման վերելքի հեռանկարների մասին:

ՁԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԹԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՅԷՐ

Ձինաստանի հեղափոխութչան առաջին շրջանը վերջացավ Կանտոնի Կոմմունայի (1927 թ. դեկտեմբեր) պարտութչամբ: Հեղափոխութչան առաջին շրջանում բանվորական շարժումն իր ամենաբարձր դադարնակետին հասավ 1927 թ. սկզբներին, իսկ գյուղացիական հեղափոխութչան ալիքներն՝ ամառվա ամիսներին: Դրանից հետո սկսվեց վայրեջքը: Կանտոնի բանվորների ապրտամբութչունը համաշխարհային նշանակութչուն ունեցող մի դեպք էր, պրոլետարիատի հերոսական փորձը՝ Ձինաստանում խորհրդային իշխանութչուն կազմակերպելու, «սակայն այդ ապսամբութչունը, հեղափոխութչան պարտութչան պրոցեսում, որչեփսիվորեն հանդիսացավ արիերգարդային (վեր-

ջապահ) մի կռիվ» (Զինկոմկուսի վեցերորդ կոնգրեսսի բանաձեռնից)։

Կանտոնի Կոմսոնալի պարտությամբ սկսվեց միջին մի ֆառ, հեղափոխության առաջին ու գալիք վերելքի միջև, չերբ հեղափոխական պրոլետարիատն ու գյուղացիությունը ծանր պարտություններ կրեցին, չերբ կոմկուսակցությունը կորցրեց իր կազմերի մի մասը, չինական բուրժուազիան դադարեցրեց իր պայքարն իմպերիալիզմի դեմ և ժամանակավոր դաշն կընքեց ֆեոդալ-միլիտարիստների հետ։ Այդ պրությունն, իհարկե, չի ժխտում այն, վոր ժամանակ առ ժամանակ բորբոքվում են որից քաղաքացիական կռիվը բուրժուազիայի ու ֆեոդալ միլիտարիստների միջև (Ինչպես 1929 թվին Նանկինի և Գուանսիի խմբավորումների պայքարը, Սուն-Չուան-Փանի յեղութը և այլն), իբրև հետևանք բուրժուազիայի և ֆեոդալ միլիտարիստների խմբակցական շահերի ներհակության կապված իմպերիալիստական պետությունների հակամարտություններին (առանձնապես Մ. Նահանգների ու Անգլիայի և Մ. Նահանգների ու Յապոնիայի միջև)։

ՉԻՆԵԿԸՆ ԲՈՒՐԺՈՒՆԵՋԻՆԻ «ՀԵՂԹՆԵԿԸ»

Չինական հեղափոխության առաջին շրջանի վերջանալուց, բանվորա-գյուղացիական հեղափոխական շարժման սարտու-թյունից հետո ստեղծված դրությունը բուրժուազխալի կողմից ոգտագործվեց ամբաց-նելու իր դիրքերը, ամբողջ տնտեսական, քաղաքական, ռազմական իշխանությունն իր ձեռքը կենտրոնացնելու միջոցով: Դրանով բուրժուազխան հեղափոխության խըն-դիրները համարեց լուծված: Այդ շրջանի մասին գոմինդանական մամուլը տվել է իր ժամանակին հետևյալ գնահատականը. «Չինաստանում հեղափոխությունը հաղթանակել է, վերջացել է հեղափոխության շրջանը և սկսվել է շինարարության մի շրջան»: Այդ շինարարությունը ղեկավարելու չեր նանկինի կառավարությունը, վորի ծրագրի հիմնական կետերն էին՝ բանակի մեծ մասի զինաթափում (այսինքն գեներալների ռազմական ուժի կրճատում և նրանց չեմ-թարկումն ազգային կառավարության), ֆինանսական, հարկային և բանակային միասնական սիստեմ, արդյունաբերության

և տրանսպորտի զարգացում և այլն: Ծրագիրն ամփոփված և այն մանրֆեստի մեջ, վոր ազգային կառավարութչան կողմից հայտարարվեց 1928 թ. հոկտեմբերին: Մի խոսքով, չինական բուրժուազիան ձգտում էր ստեղծել բուրժուական միացյալ չինական մի պետություն:

Համարյա նման գնահատական տվել և նաև 2-րդ Ինտերնացիոնալը: Չինաստանը «մտել և կապիտալիստական զարգացման հունի մեջ», ինչպես ասված և Բրյուսսելի կոնգրեսսի վորոշումներում: «Սոցիալիստ» Ալբերտ Թոման գեպի Չինաստան կատարած իր ճանապարհորդությունից այնքան էր վոգեկորված, վոր ել ավելի առաջ գնաց, նույնիսկ ազգային կառավարութչունը համարելով «Չինաստանը խաղաղացնող, սոցիալիզմ կառուցող և բանվոր դասակարգի շահերի պաշտպան»: «Չինաստանում իմ տեսածների հիման վրա կարող եմ հայտարարել, ասում ե Ալբերտ Թոման, վոր չինացի բանվորների և կապիտալիստների կյանքը նույն մակարդակի վրա չի: Դասակարգային խտրութչունների չկան, դասակարգային պայքարը վոչ մի արժեք չունի:

այդ յերկրների համար» (Շանհայի «Շուն Պաո» շինական քերթի աշխատակցին արած հայտարարությունից): Մի այլ առթիվ Պեկինի պաշտոնական արհմիությունների ժողովում արտասանած իր ճառում Թոման հայտարարել է. «Պետք է վոր չինացի բանվորները բացարձակապես ընդունեն Սուն-Յաթ-Սենի վարդապետությունը: Նախ պիտի արտադրությունը բարելավել, հետո խոսել հավասար բաժանման մասին» (Նույն քերթի 1928 թ. նոյեմբերի 22-ի համարում):

Այդպիսով, թե Գոմինդանը և թե 2-րդ Ինտերնացիոնալը գտնում են, վոր Չինաստանում հաղթանակել է բուրժուական հեղափոխությունը, Չինաստանն անցել է «կապիտալիստական շինարարության» և սրանից հետո նա, մի շարք յեվրոպական յերկրների որինակով, պետք է առաջ գնա կապիտալիստական դարգացման ուղիով: 2-րդ Ինտերնացիոնալը, խանդավառված այդ դրությամբ, հանձինս Ալբեր Թոմալի, խրատում է նույնպես չինացի բանվորներին, վոր «վոչ թե պետք է պայքարել, այլ ոգնել կապիտալիզմի դարգացմանը Չինաստանում, հարմարվել ստեղծված դրությանը,

մանավանդ վոր, ըստ Ալբեր Թոմայի, «աղ-
գային (Նանկիհնի) կառավարությունը (վոր
10,000-ավոր հեղափոխական բանվորներ և
գյուղացիներ և կոտորել) ըմբռնում և, թե
ինչն և վաս կապիտալիզմի մեջ»:

ԿՈՄՄՆԵՏԵՐՆԸ ՉԻՆԵԿԸՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՍԻՆ

Տրամադծորեն հակառակ գնահատական
ավեցին իրերի գրությանը Կոմինտերնի
Գործկոմի իններորդ պլենումը 1928 թ.
փետրվարին, ինչպես նաև վեցերորդ
կոնգրեսը: «Չինական հեղափոխության ներ-
կա օրջանը բուրժուական-դեմոկրատական
հեղափոխության օրջանն է, վոր յի վերջա-
ցել վոչ սնտեսական սեսակետից (ագրարային
հեղափոխություն յեվ Ֆետդալական հարա-
բերությունների վերացում), վոչ իմպերիա-
լիզմի դեմ ազգային պայքարի սեսակետից
(Չինասանի միացում յեվ ազգային անկա-
խություն), վոչ իշխանության դասակարգային
բնույթի սեսակետից (պրոլետարիատի յեվ գյու-
ղացիության դիկտատուրա)»:

Մի տարուց ավել և անցել այն որից,
չերբ Կոմինտերնի Գործկոմի իններորդ
պլենումը ավեց այս գնահատականը, և ժող

մեկ և կես տարի Կանադոնի Կոմսոնայի պարտությունից ու բուրժուազիայի «փաշլուն» հաղթանակից հետո: Սակայն հետագա իրադարձությունները, ինչպես նաև ներկա անցքերը մի անգամ ևս ապացուցեցին Գոմինգանի քաղաքականության սնանկությունը և Կոմինտերնի գնահատականն այն մասին, վոր Չինաստանում, ինչպես նայելի գաղութային յեղ կիսագաղութային այլ յերկրներում, բուրժուազիան ընդունակ չի լուծել բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան խնդիրները (ագրարային հարց, հակաիմպերիալիստական պայքար, Չինաստանի միացում յեղ այլն):

Գաղութային չերկրներում իմպերիալիզմի տարած տնտեսական ճնշման քաղաքականությունը, տեղական բուրժուազիայի մեջ առևտրական բուրժուազիայի դերակշռությունը, շատ տեղերում առևտրական բուրժուազիայի և կալվածատերերի նուշնությունը, արդյունաբերական բուրժուազիայի թուլությունը և նրա հակահեղափոխական որիենտացիան՝ պրոլետարական մասսաների հեղափոխականացման պրոցեսի ժամանակաշրջանում, գյուղացիական մաս

սաների արթնացումը հեղափոխական այս պայմաններում, չինական բուրժուազիայից իլիկ են բուրժուական հեղափոխութեան շարժիչ ուժը լինելու դերը: Այս պատճառներով էլ նա վորո՞ւ պայքարից նե՞ստ զիջեց մպերիալիզսին, համաձայնութեան յեկավ ֆեոդալ միլիտարիստների հետ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՅՐ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Հիմնական խնդիրներից մեկը, վոր չինական բուրժուազիան չկարողացավ լուծել, ազրարային հարցն է: Ազրարային հեղափոխութեանը բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան առանցքն է: Հողային սեփականատիրական փոխհարաբերութեանները մեջ համարյա վոչ մի փոփոխութեան տեղի չի ունեցել: Հողերի մեծ մասը կենտրոնացած է մնում կալվածատերերի ձեռքին, ինչպես նաև վոսոգման ցանցը, վոր մեծ նշանակութեան ունի Չինաստանում: Ազրարային արհնդը մնում է նախորդ բարձրութեան վրա: Հեղափոխութեան շրջանում վորոշ վայրերում իջեցված ազրարային արհնդը նորից բարձրացել է: «Բմպերիալիզմի է ֆեոդալիզմի կողմից


գյուղացիութեան շահագործման գիշատիչ
 ձևերը, կապիտալիստական սիստեմի հա-
 տուկ հարկային, փողային և առևտրական
 հարաբերությունը շարունակում են քայ-
 քայիլ Ձինաստանի գյուղը, պատճառ դառ-
 նալով գյուղի չքավորացման և գերբնակչու-
 թյան: Հնդկաստանում, Ձինաստանում,
 Հնդկաչինում գյուղացիների պառուպերիզա-
 ցիան այն աստիճանի չե հասել, վոր այժմ
 գյուղի հիմնական տիպը անհող, կամ հա-
 մարյա անհող գյուղացին է, վորը հաճախ
 սովի յե մատնված: Կալվածատիրությունը
 յերբեք կապ չունի գյուղատնտեսական մեծ
 եքսպլոատացիայի հետ և գյուղացիներից
 տրենդներ գանձելուն է ծառայում միայն:
 Հաճախ մի կողմից հողագործի և մյուս կող-
 մից կալվածատերերի կամ պետութեան միջև
 գոյություն ունեն պարագիտ միջնորդների՝
 ագարակատերերի և չենթագարակատերերի
 մի ամբողջ հերարխիա: Արհեստական վոռոգ-
 ման հին ցանցերը, վորոնք այդ չերկրնե-
 րում մեծ նշանակություն ունեն հողագոր-
 ծութեան համար, քայքայվեցին շնորհիվ իմ-
 պերիալիստների միջամտութեան և յերբ
 վերականգնվեցին, կապիտալիստական հի-

1887

1887

1887

1887



ման վրա, նրանց ոգտապործումը գյուղացիութեան համար չափազանց թանգացալ: Վատ հունձքերը հեռզհեռե հաճախակի դարձան: Աղետների և համաճարակների հանդեպ գյուղացին անպաշտպան և: Գյուղացիական հսկայական մասսաներ արտադրութեան պրոցեսից դուրս են մնում. քաղաքներում գործ զանելու հնարավորութիւն չունեն, գյուղերում շատ քիչ անգամ աշխատանք են գտնում և գառնում են թշվառ կուլիներ» (16-րդ կոնգրեսի բանաձեւից):

Մի քանի թվեր բավական են լուսարանելու համար այս դրութիւնը: Շանհայի բրնձի առևտրականների ընկերութեան տեղեկութիւնների համաձայն բրնձի 1928 թվի բերքը Յյանսու նահանգում 60⁰/₀, Անխու նահանգում 50⁰/₀, Չեցզյան, Յյանսի և Հինան նահանգներում 40⁰/₀, իսկ Հունանի նահանգում 30 տոկոս պակաս և չեղել: Յերբ այդ նահանգների բրնձի միջին բերքն ամեն տարի հաշվում եր 15 միլ. տոնն, - 1928 թ. բերքը չեղել և միայն 5 - 6 միլիոն տոնն: 1928 թվի քաղաքացիական կռիւները վերջացել

կլին, սակայն գյուղատնտեսությունը վոչ թե բարձրանում եր, այլ ընկնում, ազրարային կրիզիսը սրվում: Իսկ բերքի այդ գրությունը վոչ թե պատահական եր, այլ արդյունք այն հանգամանքի, վոր գյուղի՝ կապիտալիստական անտեսության մեջ մրտնելը և Ֆեոդալական ու կիսաֆեոդալական նախկին հարաբերությունների պահպանվելը ավելի շեշտում են կրիզիսը:

Ազրարային այդ գրության հետևանք և այն, վոր այս բողեյին Չինաստանում 12—20 միլիոն սոված ազգաբնակություն կա, վոր Մանջուրիայում տեղից-տեղ գաղթում են 4 միլիոն ազգաբնակություն և այլն: (Թվերը կարող են չափազանցված լինել, բայց յերևույթն անժխտելի յե):

Ահա քե ինչու գյուղացիական ապրստամբությունները, պարսիզանական կոնվենցերը խրոնիկական բնույթ են կրում: Յեթե մի նահանգում նրանք գաղարում են, մի ուրիշ նահանգում պոռթկում են: Վերջին գյուղացիական ապստամբությունները Հարավային Չինաստանում, գեներալ Ֆուն-Յու-Սյանի տիրած տիրրիտորիայում մահմեդականների ապստամբությունը,

վոր կրօնական հողի վրա, բայց ազրա-
բային բնույթ ունեւր և վորը վերջացալ
500.000 գյուղացիների կոտորածով, ան-
ժխտելի կերպով ցույց են տալիս այն
զժգահությունը, վորը կուտակվում և գյու-
ղացիութեան մեջ և յերբեմն պայթում:

«ՄԻԱՅՅԱԼ ՁԻՆԱՍՏԱՆԸ»

Յերկրորդ հիմնական խնդիրը, վորին
ձգտեց և ձգտում և չինական բուրժուա-
զիան (հանձինս նանկինի կառավարու-
թյան), «Միացյալ Ձինաստան» ստեղծելու
խնդիրն և: Վերջին միջանի տասնյակ տա-
րիների ընթացքում Ձինաստանում գոյու-
թյուն են ունեցել բազմաթիւ տասնձին
պետութեաններ, համարյա անկախ Պեկինի
կենտրոնական կառավարութեանից: Ձի-
նական բուրժուազիան ֆեոդալ միլիտա-
րիստների դեմ մղած մի շարք կռիւմներից
հետո ձեռնարկեց միացման գործին: Սա
կայն շնորհիւ բուրժուազիայի անհետե-
ղականութեանը, վորն արդյունք եր վերե-
վում մեր կողմից արդեն թված՝ պատճառ-
ների, տարած հաղթանակները հանգեցին
վոյ թե միութեան, այլ զանազան խմբաւո-

բումների մի խախուճ Բեդերացիայի, վորսեղ
 յուրաբանչյուր խմբավորում պահպանում է
 իր անկախ գոյությունը: Ներկայումս հենց
 դոյություն ունեն մի շարք հիմնական
 խմբավորումներ: Դրանցից առաջինն ազ-
 գային՝ Նանկինի կառավարությունն է,
 վորի իշխանությունը տարածվում է Յան-
 ցեյի հովտի մի մասի վրա, Չեցզյան, Յյան-
 սու և Անխուչ նահանգներում, ղեկավարու-
 թյամբ Չան-Կայ-Շիի, վոր ներկայացնում
 է Շանհայի խոշոր բուրժուազիայի շահերը:
 Արտաքին քաղաքականության մեջ այս
 խմբակցությունը հենվում է Մ. Նահանգ-
 ների վրա: Մյուս խոշոր խմբակցությունը,
 Բուանսիի խմբակցությունն է, ղեկերալ-
 ներ Բայ-Ցուն-Սիի, Լի-Ցուն-Սինի և Լի-
 Տին-Սինի ղեկավարությամբ: Նա տիրում
 է Հուբեյի, Հունանի, Գուանսիի և Գուան-
 դունի նահանգներին, ներկայացնում է Հա-
 րավային Չինաստանի առևտրական բուր-
 ժուազիայի և կալվածատերերի շահերը և
 վայելում է անգլ. իմպերիալիզմի ոժանդա-
 կությունը: Ապա գալիս է Շանսիական
 խմբակցությունը, վորին գլխավորում է
 ղեկերալ Յեն-Սի-Շանը և տիրում է Շան-

սի, Չախար, Սուր-Յուան և Չիլլի նահանգներին: Վերջապես գեներալ Ֆուեն-Յու-Սյանի խմբակցությունը Գանսու, Շենսի, Հե-նան, Շանդուն նահանգներում: Այս վերջին խմբակցությունները, կալվածատերերի և կուլակների իշխանություն, կապեր ունեն յապոնական իմպերիալիստների հետ: Բացի գրանից կան նաև Մանջուրիայի կառավարությունը, գեկավարությամբ Չան-Յու-Լինի ազա Չան-Սյու-Լանի, ինչպես նաև մի շարք փոքր «կառավարություններ»*)։ Չեականորեն Միացյալ Չինաստանի մեջ այս բոլոր պետություններն ոգավում են անկախ պետության բոլոր իրավունքներով ու արտոնություններով, ունեն առանձին բանակ, վարկային ու փողպային սխտամ և կենտրոնական իշ-

*) Որինակ, Չին-Արևելյան յերկաթգծի կոնֆլիկտի ժամանակ, հակառակ յերկու յերկրների դիվանագիտական և տնտեսական հարաբերությունների խզման, Սին-Ցղյանի «կառավարությունը», անկախ Նանկինից, դիմեց խորհրդային իշխանության, առաջարկելով նախկին հարաբերությունները շարունակել: Այդ ապացուցում է, թե ինչքան հեղինակություն ունի Նանկինը:

խանության յենթարկվում են այնքան, ինչքան ալդ չի մնասում իրենց շահերին և հնարավորություն ե ստեղծում միացյալ ուժերով կովել հեղափոխական շարժման դեմ: Այդ կառավարությունները միմյանց հետ դաշնագրեր են կնքում, չհզոքություն են պահպանում կամ կովում են, ինչպես միքանի ամիս առաջ սկսված Նանկին-Քուանսիական կռիվը:

Այսպիսով, Կանտոնի կոմսունայի պարտությունից հետո չեղու տարի անց, միացյալ բուրժուական Չինասանը չի իրականացել: Նանկինի կառավարության բոլոր փորձերը՝ Ֆինանսական, ռազմական, քաղաքական մի դեկավարություն ունենալու վերաբերմամբ, ձախողության են մասնվել վոչ միայն ներքին խնդիրներում, այլ յեվ արտաքին նարաբերությունների սեջ: Մենք տեսանք, Վոր այդ խմբավորումներից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն արտաքին քաղաքականությունը: Նանկինի կառավարությունը հենվում ե Մ. Նահանգների վրա, Քուանսիի խմբակցությունն՝ անգլիական խմբերի ալիստաների վրա, Ֆուն-Յուն-Սյանը սիրաբանում ե չապոնացիների հետ:

ՉԻՆԱԿԱՆ ԲԱԻՐԺՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

Այստեղ արդեն յերևան և գալիս չինական բուրժուազիայի կապիտուլյացիան իմպերիալիզմի առաջ: Ինչպես գիտենք, գաղութային ու կիսագաղութային յերկրներում բուրժուական հեղափոխության հիմնական խնդիրներից մեկն էլ հակաիմպերիալիստական պայքարն է, յեվ այդ ասպարիզում յեվ չինական բուրժուազիան միանգամայն անձնատուր յեղավ: Չինաստանի բանվորա-գյուղացիական մասսաների դեմ բուրժուազիան իր հաղթանակը տարավ առավելապես շընորհիվ իմպերիալիզմի կողմից ցույց տված աջակցութեան: Չինական բուրժուազիան աչգալիսով իմպերիալիզմի աչքին բարեհասութեան վկայական ձեռք բերեց և հնարավորութուն ստեղծեց հետագա համագործակցութեան համար: Այդ համագործակցութեան և փոխադարձ համաձայնութեան բաղմաթիվ որինակներին ականատես յեղանք 1928 թ.: Յեվ յեթե այդ համաձայնութեան ներք զոմինդանական մամուլի կողմից ցույց են տրվում իբրև հաղթանակներ, նրանք ավելի շուտ իմպերիալիզմի նոր հա-

ջողություններ ելին: Այսպես, որինակ, չինական մամուլը մեծ աղմուկ բարձրացրեց անհավասար պայմանագրերի վոչնչացման, մաքսային նոր տարիֆները ընդունման և ոտարերկրացիների եքստերրիտորիալ իրավունքների վերացման առթիվ: 1929 թ. փետրվար ամսին, նախ Միացյալ Նահանգների և ապա մի շարք այլ իմպերիալիստական պետութայունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա վերացվեցին անհավասար պայմանագրերը, վոչնչացվեցին եքստերրիտորիալութան իրավունքները և բարձրացվեցին մաքսային տարիֆները: Սակայն այդ բոլոր մագաչափ անգամ չեն խախտում իմպերիալիստների դիրքերը Չինաստանի սնտեսակտն յեվ ֆադաֆական կյանքում: Արդարև, իմպերիալիզմն այնպես խոր մխել է իր ճիրանները Չինաստանում, վոր առանձնապես վոչ մի նշանակութուն չունի եքստերրիտորիալութան իրավունքների, կամ անհավասար պայմանագրերի վերացումը: Ինչ վերաբերում է մաքսային տարիֆները ավելացման, բավական է նրա դանազան հողվածների վրա մի հայացք գցել՝ համոզվելու համար, վոր նա վոչ քե չի-

նական արդյունաբերության պատշապանու-
րյունը յեվ շահերը նկատի ունի, այլ իմպե-
րիալիստների շահերը: Որինակ, չեթե վողե-
լից խմիչքների, գլանակների, աչտինքն
արդյունաբերական նշանակությունն չունե-
ցող ապրանքների ներմուծման մաքսն ա-
վելացվում և և հասցվում 22 և կես տոկո-
սի, բամբակեղեն կամ բրդեղեն գործվածք-
ների, նավթի, դանազան մեքենայական
լուղերի մաքսային տարիֆը 7 և կեսից ա-
վելի չէ: Պարզ յերեվում է, վոր նման քա-
րիֆներից ոգսվում են իմպերիալիստական
պետությունները:

**ՆԱՆԿԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԵՎ ՄԻԱՑՍԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐԸ**

Ինչ վերաբերում է Նանկինի կառա-
վարության կողմից դեպի Ամերիկան ցույց
տրված բարչացակամության, այդ աչնքան
նպաստավոր է Մ. Նահանգների համար,
վոր նա առանց ձգձգումների ճանաչեց
Նանկինի կառավարությունը: Դեռևս 1926
թվին Ամերիկացի աշխատանքի մինիստր
Դեյվիսը հաշտարարել էր, վոր ամերիկյան
ճարդյունաբերությունը տառապում է դե-

րարտադրությունից և սպառման շուկայի պահասությունից»։ Չինաստանի մոտ 400 միլ. ազդարնակություն ունեցող և իր ինդուստրիայով դեռ շատ թույլ զարգացած հսկայական յերկիրն ամերիկյան կապիտալի համար ընդարձակ հեռանկարներ և բաց անուամ։ Ահա այդ պատճառով Վաշինգտոնի կառավարությունը չտատանովից ճանաչելու համար Նանկինի կառավարությունը, վորովհետև դիվանագիտական նորմալ հարաբերությունների վերականգնումը կուժեղացներ նաև անտեսական կապերը։

Սոշոբազուչն իմպերիալիստական յերկրրների և Նանկինի կառավարության համաձայնությունը չէր կարող անտարբեր թողնել Չինաստանում շահեր ունեցող մյուս պետություններին՝ Անգլիային և Յապոնիային։ Այդ յերկրների կողմից համառել և պահանջել, վոր 29—30 տարի առաջ յեղած դրությունը շարունակվի, հսկայական անտեսական և քաղաքական վայրիվերուններից հետո, կնշանակէր Մ. Նահանգներից յետ մնալ և կորցնել չինական շուկայից ոգտվելու ամեն հեռանկար։ Այդ պատճառով ել Անգլիան և Յապոնիան, վորոշ ճըզ-

ձգումներից հետո, ստիպվեցին ճանաչել
 Նանկինի կառավարութիւնը: Հաղթեց ամե-
 րիկյան դիվանագիտութիւնը, Անգլիան
 և Յապոնիան զիջեցին, սպասելով մի հար-
 մար առիթի, իրենց վտաքի տակի կորցրած
 հողը վերստին գրավելու համար: Դրա նա-
 խապատրաստութիւնն էր այն աշխատան-
 քը, վոր Անգլիայի կողմից կատարվեց Հա-
 րավային Չինաստանում, Յապոնիայի կող-
 մից Մանջուրիայում և Շանդունում: Գուան-
 սիի խմբակցութեան և Անգլիայի սերտ կա-
 պը մի փորձ է անգլիական իմպերիալիզմի
 կողմից Հարավային Չինաստանի գեներալ-
 ների ուժը հակադրելու Նանկինին, ամե-
 րիկյան իմպերիալիզմին: Վերջին ամիսնե-
 րի ընթացքում մի շարք փաստեր ավելի
 լույս են սփռում Ամերիկայի և Նանկինի
 «բարվոք հարաբերութիւնների» վրա: Մի-
 ջազգային մամուլն արձանագրեց, «վոր Ե-
 րիի (Մ. Նահանգներ) չերկաթուղիների
 վարչութեան նախագահի տեղակալ Ման-
 տելին չինական չերկաթուղիների վարչի
 խորհրդական է նշանակվել: Մանտելին իր
 պաշտոնին ձեռնարկելուց առաջ զբույց և
 ունեցել նախագահ Հուվերի, արտաքին գոր-

ծերի պետական քարտուղար Ստիմոնի և չինական դեսպանի հետ՝ Չինական կառավարութլունն ամերիկյան մասնագետներին խորհուրդ և հարցրել չինական յերկաթուղիների ամերիկացուցման մասին: Մանտելին նշանակվել և Չինաստան գնալու՝ տեղում գրութլունն ուսումնասիրելու և զեկուցելու համար: Իրուքյունը պարզվելուց հետո չինական կառավարուքյունը դիմելու յե Ամերիկային՝ յերկաթուղային մատերիալ գնելու համար փոխառուքյուն կնքելու նպատակով»*) : Նանկինի կառավարութլունն իբրև ֆինանսական և անտեսական խորհրդականներ հրավիրել և Մ. Նահանգների արտաքին քաղաքականութլան և բանկային աշխարհում քաջ հայտնի պրոֆ. կամերերին և Յունզին: Մորգանի գլխավորած բանկային

*) Այս ինֆորմացիան բնորոշ և և անուղղակի կերպով կապվում և Չին-Արևելյան յերկաթուղի վրա կատարված հարձակման հետ: Անհավանական չե, վոր ամատերիալ գնելու այդ բանակցութլունների յետևում թագնված և Չին-Արևելյան յերկաթուղիին ամերիկյան իմպերիալիզմի կոնտրոլին յենթարկելու համար Չինաստանին կապիտալներ հայթայթելու և գծի խորհրդային բաժինը յետ գնելու խնդիրը:

կոնցերնը բանակցություններ և վարում
Նանկինի հետ մեծ փոխառություն բաց
թողնելու վերաբերմամբ: Հայտնի Ֆորդը
ցանկություն և հայտնել ավտոմոբիլային
ճանապարհ կառուցել, յեթե մաքսաչին ար-
տոնություններ արվեն: Այս բոլորը ցույց
են սալիս, քե Մ. Նահանգները ցնեստական
նվաճման ինչպիսի լայնածավալ ծրագիր ու-
նեն, յեվ Նանկինի կառավարությունն ընդա-
ռաջում և նրանց, առայժմ ամերիկյան իմ-
պերիալիզմի մեջ չսեսնելով մրցակից, քանի
վոր ամերիկյան իմպերիալիստների կապիտալ-
ները յեվ մերոդներն անհրաժեշտ են չինական
բուրժուազիային յերկրում արդյունաբերու-
թյունը զարգացնելու յեվ բանվորական շարժ-
ման դեմ պայքարելու համար:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Այսպես, «խաղաղ ճանապարհով» իմպե-
րիալիստական պետությունները Չինաս-
տանը բաժանել են ազդեցության շրջա-
նակների, Մ. Նահանգները Յան-Յզելի հով-
տում, Անգլիան Հարավային Չինաստանում,
Յապոնիան Մանջուրիայում և Շանդունի

նահանգում: Սակայն Չինաստանի ներկա
 դրուժյան ամբողջ վողբերգությունը կայա-
 նում և նրանում, վոր իմպերիալիստական
 պետություններից վոչ մեկը չի կարող բավա-
 կանանալ ազդեցության վարոճ Երջանակով:
 Կապիտալիզմի հետպատերազմյան չերբորդ
 շրջանի հակասությունները, յերբ իմպե-
 րիալիստական չուրաքանչյուր պետություն
 դադութների յետեից և ընկնում, մղում են
 այդ իմպերիալիստական պետությունները մի-
 մյանց դեմ: Մ. Նահանգները Նանկինի կա-
 ոավարության միջոցով ուղում են ամբողջ
 Չինաստանը դարձնել ամերիկյան մի գա-
 դութ, առանց ուղմական գրավման: Այս-
 տեղ սուր կերպով ընդհարվում են Ամերի-
 կայի և Անգլիայի շահերը: Նանկինի կա-
 ոավարության և Գուանսիի խմբակցության
 միջև վերջին պատերազմը կարելի յե դիտել
 վորպես իմպերիալիստական շահերի այդ
 հակադրության մի արտահայտություն:
 Ինչպես չերևում է, Մ. Նահանգների հան-
 դեպ Անգլիայի և Յապոնիայի միջև վորոշ
 համաձայնություն հնարավոր է և կա, սա-
 կայն այդ չի արգելում, վոր Յապոնիան յեվ
 Անգլիան յեվս միմյանց հոր վորեն: Դրան

փաստ կարող ե ծառայել յապոնական աս-
րանքների դեմ բուհոտը, վոր քաջալերվում
էր Անգլիայի կողմից: Իմպերիալիստների
քողարկված այդ պայքարը, իր հերթին,
պատճառներից մեկն է, վոր Չինաստանում
բուրժուական միացյալ պետութչուն հնա-
րավոր չի լինում ստեղծել:

ՉԻՆԱԿԱՆ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Նանկինի և Գուանսիի պայքարի սրումը
չի կարելի բացատրել միայն իմպերիալիզ-
մի հակասութչուններով: Իմպերիալիստներն
ողտապործում են Չինաստանի ուժերի ներ-
հակութչունները: Նանկինի կառավարու-
թչունը ձգտում է Չինաստանի միացմանը՝
խոշոր բուրժուազիայի ղեկավարութչան
տակ, մինչդեռ Նանկինի ղեկավարութչան
տակ այդ միացման արգելք է հանդիսա-
նում Գուանսիի կալվածատերերի ու վաշ-
խառուների և Հարավային Չինաստանի
առևարական բուրժուազիայի կառավարու-
թչունը: Սոսք չի կարող լինել այն մասին,
վոր Նանկինի կամ Գուանսիի միջև հիմնա-
կան մի շարք խնդիրների վերաբերմամբ
(ազրարային խնդիր, բանվորական և գյու-

դացիական շարժման դեմ հալածանք և
 ալլն) սկզբունքային վոչ մի տարածայնու-
 թյուն չկա: Նրանցից յուրաքանչյուրը
 ձգտում և ինքը դառնալ կենտրոնական
 կառավարություն: Ներքին այս հակասու-
 թյուններն են, վոր ոգտագործվեցին Նան-
 կին-Պուլանսիի այս ստրվա կռիվների ժա-
 մանակ: Թվում և, վոր այս անգամ ևս ամե-
 րիկյան խմբերիալիզմը կարողացավ հաղ-
 թանակող դուրս գալ:

Ի՞նչպիսի դրության մեջ են բանվոր դա-
 սակարգը և գյուղացիությունը յիրկու հե-
 դափոխութիւններին մեջ գտնվող փոխանց-
 ման շրջանում, չերբ հեղափոխության ա-
 ուաջին ալիքը վերջացավ պարտություննե-
 րով, չերբ դեռևս չկա հեղափոխական նոր
 սիտուացիա, չերբ հակահեղափոխության
 ուժերը գերազանցում են բանվոր դասա-
 կարգի և գյուղացիության ուժերին:

ՁԻՆԱՍՏԱՆԻ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1928 և 29 թ. թ. ընթացքում տնտեսա-
 կան կյանքն սկսել և վերակենդանանալ:
 Քաղաքացիական կռիվներին հետևանքով
 կանգ առած առևտուրը վերսկսվել և, ար-

դյունարբերության վորոշ ճյուղեր ընդարձակվել են, նոր ճանապարհներ և յերկաթ-գծեր են շինվում:

Վերցնենք արդյունարբերության առանձին ճյուղերը: Ֆուշունում հիմնվում և նալթաղաիչ նոր գործարան՝ 8 միլ. դրամա-պլխով: Կալանի անխահանքերում, վորտեղ աշխատում և 40000 բանվոր, 1926 թ. ստացվել և 3,7 միլ. տոնն անուխ, իսկ 1929 թ.՝ 5 միլ. տոնն: Պենսիանում անխարդյունարբերությունը հետզհետե վերականգնվում և գործադուլից հետո: Շանդունում անխարդյունարբերությունը ծանր ճգնաժամ ևր ապրում՝ Չժան-Յզուն-Չանի դեմ մղված կռիվների պատճառով: Ներկայումս յապոնական կապիտալիստները, ձեռք բերելով Շանդունի անխարդյունարբերության ակցիաները, նորմալ պայմաններ են ստեղծել նրա զարգացման համար: Այդպիսով թե Ֆուշունում և թե Կալանում հանքարդյունարբերությունը զարգանում և արագ անմպով, թեև պետք և նշել, վոր ալլ զարգացման պրոցեսում չիմակայն ձեռնարկուրյունները հետզհետե անցնում են ոստերկրացիների ձեռքը: Յերկաթի արդյունա-

րերութեան ընդգրկուած դարձյալ նկատ-
 վում ե ոտարերկրյա ձեռնարկությունների
 սճումը, թեև դրան զուգընթաց վորոշ չա-
 վով վերականգնում են չին ձեռնարկու-
 թյունները: Աշանում չապոնայիք կառու-
 ցում են մի նոր չերկաթածուլարան՝ 280
 հազար տոնն արտադրականությամբ: Դա-
 յեյում նոր վերականգնված չերկաթածու-
 լարանն արտադրում ե մոտ 250 հազար
 տոնն թուջ (չուգուն): Բայց Չինաստանն
 սպրում ե գլխավորապես ներմուծելով չերկա-
 րով: 1927 թվականի առաջին 9 ամսում ներ-
 մուծվել ե, մասնավորապես Անգլիայից,
 6.000.000 տոնն չերկաթ: Շանհայում ըն-
 դ սրճակվում են չերկաթագործական ար-
 հեստանոցները: Չինաստանի արդյունա-
 րերութեան մեջ զգալի դեր ե կատարում
 ծարիրը (անտիմոնը), վորով Չինաստանը
 լավարարում ե համաշխարհային շուկայի
 սահանջի 85 տոկոսը: 1928 թ. առաջին
 չեսամսյակում ծարիրի արտադրությունը
 200 տոկոսով ավելի չե չեղել, քան 1927 թ.:
 Մեմենտի արտադրությունը 1914 թ. 1—2
 միլ. բարելից 1928 թ. հասել ե 3 միլ. բա-
 րելի: Բացի դրանից արագորին աճում ե

ցեմենտի ներմուծումը, շնորհիվ մի շարք քաղաքներում ուժեղ թափ ստացող շինարարության: Սակայն ծանր արդյունաբերությունը համեմատաբար փոքր տեղ է գրավում Չինաստանի եկոնոմիկայի մեջ: Ուստի Չինաստանի արդյունաբերության մասին խոսելիս նկատի պետք է ունենալ գլխավորապես թեթև արդյունաբերությունը, այն է՝ տեքստիլ և մետաքսի արդյունաբերությունը: 1927 թվականին Հուբեյի, Հենանի և Հունանի տեքստիլ ձեռնարկությունները կանգ ելին առել, իսկ մյուս նահանգներում աշխատում էր նրանց մոտ յերկու յերրորդը: Սակայն ներկայումս վերությունը փոխվել է. սկսել են աշխատել կանգնած գործարանները, վորոնց մի մասն անցել է յապոնացիների ձեռքը, յեվ վորո՞ւ չափով անել է արտադրանքը:

ԱՐՏԱՔԻՆ ԸՌԵՎՏՈՒՐԸ

Անցնենք չինական եկոնոմիկայի մի այլ ցուցանիշին՝ արտաքին առևտրին: 1927 թ. զգալի չափով նվազել էր Չինաստանի արտաքին առևտուրը. շատ նվազել էր ներմուծումը և վորոշ չափով պակասել էր ար-

տածուձը: Դրա պատճառներն են՝ առևտրա-
կան ճանապարհների փակումը, արծաթի
գնի իջեցնելը, ժողովրդական տնտեսության
ընդհանուր ճգնաժամը և հեղափոխությունը:
1928 թ. արտաքին առևտուրն զգալիորեն
բարելավվել է: Ծովային մաքսատան յև-
կամուտն այդ թվականին կազմում է 50
միլիոն տակ:

Ինչ վերաբերում է արանսպորտին, պետք
է ասել, վոր նավարկությունը բացի Յանցեյի
ստորին հոսանքից, լիովին վերականգնված
է: 1927 թ. Շանհայ-Հանկոու և Շանհայ-
Նանկինի չերկաթգծերի յեկամուտը կազ-
մում էր 3.600.000 չինական դոլլար: Սա-
կայն զարմանալի թափ է նկատվում ճա-
նապարհների շինարարության ասպարի-
զում: Գոյություն ունի բազմաթիվ ճանա-
պարհների մի ցուցակ, վորոնք գտնվում են
կառուցման աչս կամ այն շրջանում: Փորզը
Շանհայում կառուցում է ավտոմոբիլներ
հավաքելու (սարքելու) գործարան, վորով-
հետև Ջինաստանում արագորեն աճում է
ավտոմոբիլների պահանջը: (Թվական տը-
վյալները վերցված են կոմսկադեմիայում
կաշացած դիսկուսսիայի նյութերից):

ՆԵՂԱՓՈՒՆԿԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՆԵՒՈՐՏՏԿԻՆ

Սակաչն մի կողմից ազրարալին հարցի անլուծելի մնալը և մյուս կողմից կապիտալիստական զարգացման այս նոր թափը ռացիոնալացման պայմաններում ուժեղացնում են բանվոր դասակարգի շահագործումը և քաջբայում են գյուղը, ավելացնում են գյուղացիության դժգոհությունը, հետքհետք պրոլետարացնում ֆազաբի յեվ գյուղի մանր-բուրժուական խավերին: Այս գրությունն է, վոր պատճառ է լինում գյուղացիական խլրտումների և պարաիզանական կոիվների: Պրուլետարիատը ծանր կորուստներից հետո աչժմ ստիպված է մնալ պաշտպանողական դիրքերի վրա: Սակաչն հետըհետե բանվորների նյութական գրությունը վատթարանում է, գործազրկությունն ավելանում է, սպիտակ տերրորը գայրուլթ է ամբարում բանվոր դասակարգի մեջ: Գումինդանի ռեՖորմիսական-բանվորական ֆադալանությունը կեղծիք է յեվ յերբեք կյանքում չի կիրառվում: Ուխանում, վոր Չինաստանի արգյունարերական ամենագլխավոր կենտրոններից է, բանվորական որը 11-12

ժամ ե, իսկ ամսական աշխատավարձը 10-15 չինական դոլլար (մի չինական դոլլարը հավասար ե մոտ մի սուբլու): Մյուս քաղաքներում ևս բանվորների գրությունն ավելի լավ չե: Այս կացության հետևանքով, հակառակ նրան, վոր սպիտակ տերրորը կատաղի կերպով կիրառվում ե, 1928 թվի վերջերին՝ 1929 թվին մի շարք գործազուներ տեղի ունեցան Շանհայում, Պեկինում, Նույնիսկ Կանտոնում: Միլիտարիստների բանակների մեջ ևս ապստամբություններն ավելի հաճախակի չեն դառնում: Հաճախ ամբողջ գործատանք անցնում են ապստամբ գյուղացիների կողմը: Յեվ յերե հեղափոխության առաջին օրջանում գործի ապստամբությունը հետևիանք եր ոտնիկները չվհարելուն, այժմ բանակներում տեղի ունեցող ապստամբություններ սերս կերպով կապված են ագրարային հարցին:

Այս բոլորը նախանշաններ են այն հեղափոխական վերելքի, վոր անպայման հաջորդելու յե ներկա անցման շրջանին: Այդ գրության գնահատականից չեղնելով ե, վոր կոմիսարների վեցերորդ կոնգրեսսը նշեց Չինաստանի կոմկուսի անելիքները:

ՉԻՆԿԱՄԿՈՒՄԻ ԱՆՆԵԼԻՔՆԵՐԸ

«Չինաստանում հեղափոխական նոր ալիքը,» *ասված է վեցերորդ կոնգրեսի բանաձևում*, նորից դնելու յե կուսակցության առաջ զինված ապսամբություն պատրաստելու անմիջական գործնական ռեխասանքը, բուրժուական դեմոկրատական հեղափոխությունն իր վախճանի հասցնելու, իմպերիալիստների, կալվածատերերի յեվ ազգային բուրժուազիայի՝ Գոմինդանի իռեսանությունը տապալելու համար: *Ներկա մոմենտում, վսր բնորոշվում է իբրև չինական ժողովրդի լայն մասսաների հեղափոխական ալիքի բացակայությամբ, կուսակցության ընդհանուր գիծն է լինելու՝ պայքար մասսաները նվաճելու համար: Հակաիմպերիալիստական շարժման ուժեղացման, գործադուլային շարժման վերջ արթնացումի և շարունակվող գյուղացիական գործողությունների պայմաններում տարվող այս քաղաքականությունը կուսակցությունից պահանջում է իր բոլոր ուժերի լարում, պրոլետարիատին կուսակցության գլխավոր լողուններին շուրջ համախմբելու և միացնելու համար, կազմա-*

կերպչական հսկա աշխատանք՝ պրոֆմիտու-
թյունները և հեղափոխական գյուղացիա-
կան միություններն ուժեղացնելու համար
պրոլետարական և գյուղացիական մասսա-
ների մեջ առորյա տնտեսական և քաղա-
քական աշխատանքի ղեկավարման հար-
մարեցումը և ուժեղ աշխատանք՝ անցած հե-
ղափոխական շրջանի փորձը պրոլետարիա-
տին բացատրելու համար: Միևնույն ժա-
մանակ կուսակցությունը մասսաներին
պետք է բացատրի, վոր անկարելի է հիմ-
նական բարվոքում իրենց գրության մեջ,
անկարելի է իմպերիալիստների տիրապե-
տությունը տապալել և լուծել ագրարային
հեղափոխության խնդիրները՝ առանց տա-
պալելու Գոմինդանի և միլիտարիստների
տիրապետությունը և հաստատելու խոր-
հուրդների իշխանությունը:

«... Մասսաները նվաճելու համար գլխա-
վոր լողունները պետք է լինեն՝ 1) իմպե-
րիալիստների տիրապետության վոչնչացում,
2) ոտար ձեռնարկների և բանկերի բռնա-
գրավում, 3) չերկրի միացումը՝ բոլոր աղ-
պերի ինքնորոշման իրավունքով, 4) մի-
լիտարիստների և Գոմինդանի իշխանու-

թյան տապալումը, 5) ութժամյա բանվորական որ, աշխատափարձի բարձրացում, գործազուրկներին նպաստ և սոցիալական ապահովություն, 6) խոշոր կալվածատերերին պատկանող հողերի գրավումը և գյուղացիներին ու զինվորներին հանձնում, 7) միլիտարիստ կառավարությունների և տեղական պաշտոնյաների ամեն տեսակի հարկերի վոչնչացում, յեկամտային, միասնական պրոպրեսսիվ հարկ, 8) դաշն ԽՍՀՄ և համաշխարհային պրոլետարական շարժման հետ»:

Ահա այս լուղուղներ ի տակ և, վոր այժմ պայքարում և Չինաստանի կոմկուսակցությունը:

ԶԻՆ-ԱՐԵՎԵԼԵՅԱՆ ՅԵՐԿԱԹԳԾԻ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Իմպերիալիզմի գաղերը ԽՍՀՄ դեմ—Ազադակային հարձակում Չին-Արևելյան յերկաթգծում—«Կոմմունիստական պրոպագանդ»—Ինչպես և յէրը կառուցվեց Չին-արևելյան յերկաթգիծը—Մուկղենի գաշնագիւրը և Չին-Արևելյան յերկաթուղին—Յերկաթուղու անտեսական դրությունը կոնֆլիկտի նախորդակեն—Յերկրորդ Ինտերնացիոնալը կոնֆլիկտի մասին—Տրոցկիստները և կոնֆլիկաը—Կոնֆլիկաը սըրում և հակասությունները—Յապոն-անգլո-ամերիկյան մրցումը—Ամերիկայի միջամտությունը—Միջադգային պրոլետարիատի բողոքը—Գառակարգային թշնամին նահանջում և և մանյովրում և

ԻՄՊԵՐԻԱԼԻՉՄԻ ԳՆՎԵՐԸ ԽՅՀՄ ԳԵՄ

Սոցիալիզմի շինարարութեան հուժկու առաջխաղացումը Պորհրդային Միութեան մեջ որեցոր ավելի կատաղեցնում է մեր ներքին ու արտաքին դասակարգային թշնամիներին: Նրանք ատամ են սրում մեր դեմ, պատրաստվում են հարձակվելու պրոլետարիատի դիկտատուրայի չերկրի վրա: Իմպերիալիզմն այդպիսի պատրաստութուն է տեսնում համարյա բոլոր չերկրներում: Ռազմական, դիվանագիտական, տնտեսական միջոցներով նա աշխատում է ամեն դժվարութուններ հարուցել Պորհրդային Միութեան դեմ: Լեհաստանում, Ռումինիայում, Չեխո-Սլովակիայում, Բալթիան և Բալկանյան չերկրներում ռազմական արդյունաբերութեան ինտենսիվ զարգացումը՝ անգլո-Ֆրանսիական կապիտալի ոժանդակութեամբ, գաղտնի պալմանագրերը մեր հա-

ընան այդ չերկրներէց մի քանիսի միջի,
 Ավզանստանի անցքերը և այլն, — նույն քա-
 ղաքտականութեան տարրեր կողմերն են և
 դրա ամենաթարմ փաստը Չին-Արևելեան
 չերկաթգծի դեմ իմպերիալիստների և չի-
 նական միլիտարիստների ավազակային
 հարձակումն է:

ԱՎԱՋԱԿԱՅԻՆ ՀԱՐՉԱԿՈՒՄ՝ ՉԻՆ-ԱՐԵՎԵԼԵԱՆ ՅԵՐ- ԿԱԹՓՈՒՄ

Վտոնահարելով իրեն՝ բուրժուազիայի
 կողմից հաստատուած «միջազգային իրա-
 վունքի» տարրական որենքները, հուլիսի
 10-ին չինական գեներալների բանդաներն
 սպիտակ-գվարդիական ավազակների մաս-
 նակցութեամբ հարձակվեցին Չին-Արևելեան
 չերկաթգծի վրա, գրավեցին գծի վարչու-
 թեան շենքը, վտարեցին նրա վարչութեան
 խորհրդային ներկայացուցիչներին, գծի վրա
 աշխատող բազմաթիւ խորհրդային քաղա-
 քացիների փոխարինեցին սպիտակ-գվար-
 դիականներով, գրավեցին չերկաթգծի դրոշ-
 րոցները, փակեցին ակումբները, ցրեցին
 հասարակական կազմակերպութեանները:

զործագրելով ամեն տեսակի բռնութիւններ:

Հետագայում կամայական խստութիւնները չափու սահմանն անցան: Յերկաթգիծ հարյուրավոր ծառայողներ և բանվորներ ուղարկվեցին կոնցինարացիոն (արգելափակման) կայանները, վորտեղ յենթարկվեցին հակամարդկային տանջանքների և զրկանքների, աչն աստիճան, վոր շատերն ստիպվեցին սննդազուլի միջոցին գիմել՝ Իրենց ճակատագիրը մեղմել տալու համար: Գրավումից հետո ամբողջ յերկարգծում սկսվեց Բայֆայումը: Գնացքների բազմաթիւ հարձակումները, մի շարք գնացքների յիթեկեկութեան դաղարեցումը, կամայական բռնագրավումները, գազազած գինվորականութեան յելուլթները, խունխուղների հարձակումները յերկաթգիծը հասցրին կատարյալ քայքայման: Իրան միացած չինական գեներալների պատերազմական պատրաստութիւնները, զորքի և ռազմական պիտուցքների կենտրոնացումը մեր սահմանների վրա, խորհրդային կառավարութեան կողմից անտեսական և քաղաքական հարարերութիւնների իրզումը Չինաստանի հետ,—

Մանջուրիայի տնտեսական կյանքում ըստեղծեցին այնպիսի դրուժյուն, վոր կարելի չե կատաստրոֆիկ համարել: Դադարեց սուկտուրը, տնտեսական գործարքները, սահմանամերձ շրջանների չինական ազգարընակութունը գաղթում եր յերկրի խորքերը, հենց չինական միլիտարիստների ու սպիտակ-գլարգիականների թալանի երբունութունների հետեանքով առևտրականներն ստիսրված ելին գիմել Մուկդենի կառավարության, վորպեսզի մորատորի (առևտրական պարտքերի վճարման դադարեցում) հայտարարվի և այլն:

«ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԳ»

Ինչո՞վ են արդարացում չինական պեներալներն իրենց հակախորհրդային յելուչթը Չին-Արևելյան յերկաթգծի դեմ: Ոգոստոսի վերջերին ամերիկյան և այլ կառավարություններին ներկայացրած մի նոտայում, ինչպես նաև մամուլում հրատարակված մի շարք փաստաթղթերով չինական կառավարութունը փորձում ե ապացուցել, վոր Չին-Արևելյան յերկաթգիծը խորհրդային կառու-

վարության հողմից «ուստագործվում եր իբրև սլրոպազանդի միջոց»։ Բուրբ յերկրների հակախորհրդային տարրերի սիրելի արգումենտան և այդ։ Ամեն անգամ, յերբ իմպերիալիստները կազմակերպում են վորեե հարձակում Խորհրդային Միության դեմ կամ սկսում են վորեե զրաւարտություններ կամպանիա, սպիտակ-դվարդիական ու այլ հակախորհրդային կազմակերպությունները պատրաստ են ամեն տեսակի «դոկումենտներ» հայթայթել՝ ասպացուցելու համար, վոր խորհրդային կառավարությունը կոմմունիստական պրոպագանդ և մղում»։ Նույն մեղադրանքը չէր արվում Ջինովկի կեղծ նամակի, «Արկոսի» Լոնդոնի բաժանմունքի, Բերլինի խորհրդային ներկայացուցչության վրա կատարված հարձակումների ժամանակ։

«Կոմմունիստական պրոպագանդ» Ջին-Արևելյան յերկաթգծի վրա կատարվում եր այն չափով, ինչ չափով չերկաթգիծը՝ խորհրդային ադմինիստրացիայի շնորհիվ առաջագիմում եր, դեֆիցիտային գրությունից դուրս եր չեկել, վերասարքավորվել եր, ապոււմբներ, հիվանդանոցներ և յին բացվել

տարեցտարի չերկաթզծի ծառայողների և բանվորների (վորոնց համարչա կեսը չինացիներ են) տնտեսական դրությունը բարելավվում էր, աշխատավարձն ավելանում էր, Մանջուրիայի տնտեսութչունն արագ կերպով բարձրանում էր և այլն:

Այս բոլորը «կոմմունիստական պրոպագանդ» էր, աչն չափով, ինչ չափով չինական աշխատավոր մասսաները տեսնում էյին, վոր բոլորովին հակառակ ցարական նախկին աղմինխտրացիայի կամ իմպերիալիստական ձեռնարկների, զծի խորհրդային աղմինխտրացիան յերկաթզծը չինական կառավարութչան հետ հավասար պայմաններով շահագործում էր վոչ թե իմպերիալիստական նպատակներով, այլ իբրև առևտրական մի ձեռնարկ, վորից ոգտվում էյին չերկու յերկրներն էլ, և վորը հենվում էր չերկու յերկրների շահերի հավասար պաշտպանութչան սկզբունքի վրա*):

«Կոմմունիստական պրոպագանդն» արգելելու աչդ պատրվակն այնքան անհիմնու է թծաղելի յե, վոր նույնիսկ բուրժուա-

*) Տ տարվա ընթացքում Չինաստանն ստացել է իբրև շահարածին՝ 48 և կես միլ. ուրլի վոսկով:

կան մամուլը չի հավատում զրան: Այդ տեսակետից բնորոշ և ամերիկյան բուրժուական «Նյու-Յորկ Հերալդ Տրիբուն» թերթի կարծիքը. «Նանկիրնյան կառավարության հրապարակած հակախորհրդային փաստաթղթերը. — զրուժ և թերթը, — բոլորովին անհամոզեցուցիչ են, հատկապես Բերլինի կեղծ փաստաթղթերի գործի (Որլովի դատավարութուն) մերկացումից հետո»:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի զրուժյան մեջ եր չերկաթզիծը ցարական իշխանության ժամանակ, իմպերիալիստների և ըսպիտակ-զվարդիականների զրավման որերին և հետագայում, յերբ անցավ խորհրդային չինական աղմինխատրացիային:

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՅԵՐԲ ԿԱՌՈՒՅՎԵԾ ԶԻՆ-ԱՐԵՎԵԼՆԵՆ ՅԵՐԿԱԹՊԻԹԻ

Զին-Արեւելյան չերկաթուղին մի մասն և անդրսիբիրյան չերկաթզծի, 1485 կ. մետր չերկարությամբ, ամբողջությամբ չինական տերրիտորիայում: Այդ չերկաթզծը՝ Մանջուրիա կայարանում մտնելով չինական հողը, տնցնում և խարբինից և նորից

ԽՈՂՄ տերը խոտորիան մտնում և Պողրանի շնայա կայարանում և չերկարում և մինչև վազգի վաստակ:

Ենորթիվ այդ գծի մինչև վազգի վաստակ ճանապարհը կրճատվում և 9¹/₅ կիլոմետր: Խորքի նից մի ճյուղ 238 կիլոմետր չերկարութեամբ, գնում և մինչև կուան-Յեն-Յի կայարանը, վորտեղից բաժանվում և հարավ-մանջուրական չերկարութեամբ և չերկարում և մինչև Պորտ-Արտուր: Այս վերջին գիծը գտնվում և Յապոնիայի հսկողութեան տակ, ուս-յապոնական պատերազմից հետո կնքված պայմանագրի հիման վրա:

Զին-Արևելյան չերկարութեամբ պայմանագրերը կնքվեց 1896 թ. ոգոստոսի 27-ին մի կողմից չինական կառավարութեան և մյուս կողմից ուս-չինական բանկի միջև (հետագայում ուս-ասիական բանկ): Այդ պայմանագրերն այն ստրկական պայմանագրերից մեկն և, վորով չինական կայսրները վաճառում ելին իրենց չերկիրը միջազգային իմպերիալիզմին:

Մերձավոր Արևելքի (Թուրքիա, Ավգանստան և այլն) շուկաներում անգլիական և գերմանական մրցակցութեան պատ-

ճառով առաջ շարժվելու դժվարությունների հանդիպող ցարական իմպերիալիզմը հսկայական ակտիվություն եր ցուցաբերում Հեռավոր Արևելքում: Ահա այդ իմպերիալիստական քաղաքականության արդյունքն եր Չին-Արևելյան յերկաթուղին: Մասամբ այդ քաղաքականությունն եր նաև, վոր հանդեպ ուսու-յապոնական պատերազմի, վորի շնորհիվ յապոնական և անգլիական իմպերիալիստները փորձեցին կաշկանդել ցարական Ռուսաստանի ծավալումը նաև Հեռավոր Արևելքում:

Գծի կառուցման համար ծախսվեց 459 միլիոն վոսկի սուբլի, վորի մեծ մասը պետական գումարներ էյին: Առաջին ութ տարիների ընթացքում յերկաթգիծը 178 միլիոն սուբլի դիֆիցիտ ունեցավ, վորը փակվեց ցարական պետական գանձարկղի կողմից: Չին-Արևելյան յերկաթգծի շահագործման մեջ սերս կապով շահագրգռված եր Ֆրանսիական կապիտալը, ցարական կառավարության այն արտաքին փոխառուրյունների պատճառով, վորոնք մեծ մասով ծածկվում էյին Ֆրանսիական շուկայում: Չինացիներն իրավունք ունեյին դիծը դնել 36 տարի հե-

առ, հակառակ դեպքում 80 տարի հետո
 դիժն առանց փոխարինութեան անցնում եր
 Ձինաստանին:

Մինչև իմպերիալիստական պատերազմը
 յերկաթգիծը միաս ե ունեցել: Իմպերիալիս-
 տական պատերազմի շրջանում, շնորհիվ Ա-
 մերիկայից և Յապոնիայից ստացվող մեծա-
 քանակ ռազմանյութի և այլ ապրանք-
 ների, դրությունը փոխվեց: Յերկաթգիծը
 դառավ հասութարեր:

ՄՈՒԿԳԵՆԻ ԳՆԹՆԱԳԻՐԸ ՅԵՎ ԶԻՆ-ԱՐԵՎԵԼՏՆՆ ՅԵՐԿԱԹԳԻԾԸ

Քաղաքացիական կռիվների ընթացքում
 յերկաթգծի վարչությունն ամբողջովին ան-
 ցավ Ֆրանսիական բանկերի և սպիտակ-
 գվարդիականների ձեռքը, շնորհիվ այն հան-
 դամանքի, վոր ռուս-ասիական բանկի սր-
 տասահմանյան ճյուղերը նրանց կողմից վը-
 ըրավվել էին: Միայն քաղաքացիական կռիվ-
 ներից հետո Խորհրդային Միությունը կա-
 ըրողացավ նորից տեր դառնալ իր իրավունք-
 ներին:

Ցարական կառավարութեան ժամանակ
 պայմանագրի պայմանները չափազանց ըս-

արքեպուցիչ ելին Չինաստանի համար: Յերկաթգիծն իբրև կոնցեսսիա չեք արված, յերկաթգծի տերրիտորիայում համարյա ունակուն որևէքներ; ագմինիոտրնցխա և բննակ գոյություն ունեք: Փաստորին Չինաստանը վոչ մի մասնակցություն չունեք յերկաթգծի վարչության մեջ: Խորհրդային Միության կառավարությունը հետագայում չեք կարող այդ գրությունը պահել:

1924 թ. նախ Պեկինում, ապա Մուկդե-նում կնքվեցին պայմանագրեր, վերոնք չինական ժողովրդի շահերը միանգամայն ապահովում ելին: Այդ պայմանագրերի արամագրությունները հետևյալներն ելին. Չին-Արեվելյան յերկաթգիծը դառնում եր զուտ առևտրական մի ձեռնարկություն: Խորհրդային կառավարությունը հրաժարվում եր յերկաթգծի տերրիտորիայում ցարական Ռուսաստանի ուղղական, դատական յեվ այլ իրավունքներից: Գծի վարչությունը քաղկացած ե լինելու 10 հոգուց, կեսը չինացի, կեսը խորհրդային քաղաքացիներ, նախագահությամբ մի խորհրդային քաղաքացու, իսկ փոխ-նախագահությամբ մի չինացու վորոնք ստորագրելու յնն միասնա-

բար: Գծի տեխնիկական ղեկավարը խորհրդային ներկայացուցիչն եր, չինացի յեվ խորհրդային ռզնականներով: Բոլոր մյուս ղեկավար պերսոնալը հավասարապես բաժանվում էյին: Վիճելի խնդիրները չինական յեվ խորհրդային կառավարությունների կողմից բանակցությունների միջոցով էյին լուծվելու: Գիծը Չինաստանին հանձնելու պայմանաժամը 80-ից պակասեցվեց 60 տարվա:

Պարզ է, վաչ ցարական Ռուսաստանի ժողովուրդների փողերով շինված յերկաթգծի ոգուտի 50 տոկոսը կամովին զիջելով Չինաստանին, խորհրդային իշխանությունը ցույց եր տալիս, թե ինչպիսի բարեկամական քաղաքականություն է տանում Չինաստանում:

ՅԵՐԿԵԹՈՒՂՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Իմպերիալիստների և սպիտակ-գվարդիականների միջամտության պատճառով քայքայված յերկաթգիծն սկսեց վերականգնվել 1921 թվից, գեֆիցիտային դրությունից անցնելով շահավետության: Տարեցտարի

ավելացավ փոխադրվող ապրանքների քանակը և ոգոււար, ինչպէս յերեւում և հետեւյալ թվերից (մտտավոր հաշվով).

Ապրանք և փոխադրվել տոններով	Մուտքը ուղարկներով
1913 թ. 1,156 հազ.	21 միլիոն.
1921 թ. 2 միլիոն.	—
1924 թ. 3 »	—
1925 թ. 3,8 »	46 միլիոն
1926 թ. 4 »	54 »
1927 թ. 4,8 »	—
1928 թ. 5,6 »	62 միլիոն

Այս գծով ճանապարհորդել ևն 1922 թ. 2,429,000 հոգի, 1928 թ.՝ 5,090,000 հոգի:

Նման դարգացում հնարավոր յեղով շնորհիվ այն ուշադրութեան, վոր խորհրդային իշխանութեունը դարձրեց գեպի այդ գիծը, վոր միջազգային խոշոր նշանակութեուն ունեն, Հեռավոր Արևելքը կապում եր Յեվրոպային: Իսկ ավելի մեծ նշանակութեուն ունեն Մանջուրիայի համար, վորի ամբողջ ներքին ու արտաքին առևտուրը և արդյունաբերութեունը սերտ կերպով կախում ունեյին գծի կանոնավոր աշխատանքից:

Ինչ վերաբերում է դժի տեխնիկական դրուժյանը, առ 1-ն հունվարի 1928 թ. կատարած վիճակագրության համաձայն նա ներկայացնում եր հետևյալ պատկերը: Գծի վրա կար 513 շոգեմեքենա, 11,259 ապրանքատար և 714 մարդատար վագոն: Գծի վրա աշխատում էին 30,185 յերկաթուղայիններ, վորոնց համարյա չերկու չերրորդը խորհրդային քաղաքացիներ, մնացյալը՝ չինացիներ:

Մուկղենի պայմանագրից հետո գծի ղեկավարութան խնդրում չերկու կողմերի փոխհարաբերությունները համարյա նորմալ էին: Ճիշտ է, չերբեմն մուկղենյան իշխանությունները, մասնավորապես Չան-Ցո-Լինի որոք կոպիտ կերպով խախտում էին պայմանագրի տրամադրությունները, բայց և այնպես բանակցությունների միջոցով հնարավոր եր լինում ստեղծված կոնֆլիկտները հարթել: Միքանի անգամ չինական իշխանությունները հարձակումներ գործեցին գծի խորհրդային հիմնարկներին՝ դպրոցների, պրոֆմիությունների, ակումբների վրա: Դրանք, այսպես ասած, հետախուզական գործողություններ էին այն լկտի

հարձակման, վոր կասարվեց այս սարվա
հուլիս ամսին իմպերիալիստների յեվ ցրանց
լակեյների կողմից յեվ հանգեց խորհրդային-
չինական դիվանագիտական ու սոցիալական
հարաբերությունների խզման:

ՅԵՐԿՐՈՐԳ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԸ ԿՂՆՓԼԻԿՏԻ ՄԸՍԻՆ

*Ինչպես վերև ասացինք, լերկաթզծի գեմ
հարձակումը մի առանձնացած, օլտասահա-
կան, ակղական բնույթ ունեցող զեպք չե,
Խորհրդային և չինական իշխանություն-
ների միջև տեղի ունեցած մի հասարակ
կոնֆլիկտ չե, այլ լերկար ժամանակից ի-
վեր, սոցիալ-դեմոկրատիայի գիտությամբ,
իմպերիալիստների և չին միլիտարիստների
կողմից պատրաստված մի դավադրություն
և Խորհրդային Միության գեմ:*

*Չե՞ վոր հարձակման նախորդակին գեր-
մանական սոցիալ-դեմոկրատիայի որդան
«Ֆորվերտս»-ում մի շարք հողվածներ ելին
ըլչա տեանում Չին-Արևելյան յերկաթուղու
ուռա եմիգրանտների ստորագրությամբ, վո-
րոնք լիքն ելին թունալից հարձակումնե-
րով Խորհրդային Միության գեմ: Այդ ա-
պացուցում և, վոր 2-րդ Ինտերնացիոնալի*

լիդերները, իբրև՝ դեկավարներ մի շարք յերկրների կառավարութիւններ (Անգլիա, Գերմանիա), նույնիսկ վոչ միայն տեղյակ ելին դավադրութեան, այլեւ՝ ակտիւ մասնակցութիւն են ցուցաբերել նրան:

Կոնֆլիկտից հետո սոցիալ-դեմոկրատիան միանգամայն դեն շարտեց իր դիմակը: Ամբողջ սոցիալ-դեմոկրատական մտածուլը ինչպէս միշտ, այս անգամ ևս ոգտադործեց այդ առիթը՝ հարձակումներ դործելու համար Խորհրդային Միութեան և Կոմիւնտերնի դեմ, միևնույն ժամանակ ել խոնարհ, լակեյական հավատարմութեան հավաստիքներ տալու իմպերիալիզմին:

Հարձակումներ ի մեջ առաջին տեղն, իհարկե, բռնում և գերման սոցիալ-Ֆաշիստներ ի որդան «Ֆորվերտսը», վորը լկտի կերպով հաշտարարեց, թե վոչ մի պրովոկացիա չի չեղել Չին-Արևելեան յերկաթգծի վրա, վոր յերկաթգծի գրավումը հակախորհրդային մի քայլ չէ»:

Գերման սոցիալ-դեմոկրատիայի Բերլին-Բրանդենբուրգյան կազմակերպութեանն ավելի մեծ յուանդ և ցուցաբերում իր դրվելի դերը կատարելու մեջ: Իր մանիֆեստ-

տում այդ կողմակերպությունը, վորի ներ-
շնչողներից և զեկավարներից և արյունոտ,
բանվորներ զնդակահարող Բերլինի վոստի-
կանապետ տխրահուշակ Յերգիբելը, գրում
և. «Կոմմունիստները, վորոնք մի տարի ա-
ռաջ «ձեռքերը հեռու Չինաստանից» լո-
ղունգի տակցույցեր և ժողովներ ելին կազ-
մակերպում, այժմ ամենավտանգավոր գըր-
գուություններ են ահում Չինաստանի գեմ»:

Այսպիսով սոցիալ-դեմոկրատիան յեվս փոր-
ձում և իմպերիալիստների յեվ միլիտարիստնե-
րի բեզը պատշապանել, կոնֆլիկտի մեղքը զցե-
լով Խորհրդային Միության վրա:

Սակայն ավելի առաջ և գնում չերկրորդ
Ինտերնացիոնալի Գործկոմը: Նա քննու-
թյան և առել այդ կոնֆլիկտի առթիվ
ստեղծված քաղաքական գրությունը և իր
վորոշման մեջ բացահայտ կերպով պաշտպա-
նում և նանկինչան կառավարությունը:

Միևնույն ժամանակ չերկրորդ Ինտեր-
նացիոնալն իմպերիալիզմի շահերի լավա-
դունցն պաշտպանի գերն և վերցնում, յերբ
առաջարկում և Չին-Արևելյան չերկաթուղու
վրա հաստատելու «չշահապրդուված» պետու-
թյունների հսկողությունը»: Այդ առաջար-

կը շատ նման և ամերիկյան և ֆրանս. իմպերիալիստները, առաջարկին: Նրա ասելով՝ Անգլիան, Յապոնիան, Ամերիկան, Ֆրանսիան չշահագրգռված պետութիւններ են: Այստեղ տգիտութիւնը չէ, վոր խոսում է, այլ ամենաստոր կեղծավորութիւնը և դավաճանութիւնը:

ՏՐՈՑԿԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՆՓԼԻԿՏԸ

Սոցիալ-ֆաշիստներից չեա չեն մնում նաև տրոցկիստները, հրապարակ գալով իրրև պաշտպաններ չինական գեներալների, փորձելով վարկաբեկել Խորհրդային Միութիւնը: «Ռուսաստանը, գրված և գերման սոցիալիստների որդանում, — Մանջուրիայում տանում և ամենավատ տեսակի գաղութալին քաղաքականութիւն»: Նրանք եժան դեմագոգիա չեն անում», թի Ռուսաստանը պետք է հրաժարվի Չին-Արևելյան յերկաթգծից հողուտ չինական աշխատավորութիւն»:

Տրոցկիստներն իրենց այս ճոճոան, շարուն, «ձախ» ֆորմուլաչով փաստորեն և ուղղակի կերպով չուղ են քսում իմպերիալիստների ու միլիտարիստների հացին: Այս

բողեյիս, առանց այլ և այլի գծից հրաժար-
վելը կնշանակի, վոչ թե ընդառաջել Չինաս-
տանի աշխատավորությանը, այլև խորհրդ-
դաշին աշխատավորության դուշքը հանձնել
Չինաստանի հեղափոխական բանվորներին
և գյուղացիներին հալածող գեներալական
կառավարությանը:

Ընդհակառակը, ներկա կոնֆլիկտում
յիթե յերկու կողմեր կան, դրանք վոչ թե
յերկու հարևան յերկրների աշխատավոր
մասսաներն են, այլ մի կողմը կանգնած
են իմպերիալիստները և միլիտարիստները,
մյուս կողմը՝ չին և խորհրդաշին աշխատա-
վորները:

Այդ կետը շեշտված է թե կոնֆլիկտի
առթիվ չինական կոմկուլսակցության կող-
մից հրատարակված կոչի և թե վերջերս
գումարված (ոգոստոս 1929 թ.) խաղաղ-ով-
կիանոսյան արհմիութչուհների կոնֆերեն-
ցիայում չինական և խորհրդաշին ներկա-
չացուցիչների կողմից առաջարկված բանա-
ձևում: «Չին-Արևելյան յերկաթգծի կոն-
ֆլիկտան, — ասված է բանաձևում, — ԽՍՀՄ և
Չինաստանի ժողովուրդների միջև առաջ
չեկած կոնֆլիկտ չէ, այլ մի կոնֆլիկտ է,

վոր բռնկվել է մի կողմից Խորհրդային Միութիւնն և Չինաստանի աշխատավորներին, իսկ մյուս կողմից Ֆեոդալական բուրժուական սեակցիայի ու իմպերիալիստներին միջև:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՆՊԸՏԸԿՆԵՐԸ

Ինչպիսի նպատակներ են հետապնդում իմպերիալիստները Չին-Արևելյան չերկաթ-գծի գրավումով: Դրանք մի քանիսն են:

1. Գրավելով յերկաթգիծը, մեր թշնամիների նպատակն էր տնտեսապես ֆեասել և վարկաբեկել Խորհրդային Միութիւնը: Վերևում տեսանք, թե ինչպես այդ գիծը վերջին տարիներում հետզհետե բարգավաճում ու զարգանում էր:

2. Այդ գիծն իմպերիալիստների ձեռքին մի ուժեղ բազա կլինէր Խորհրդային Միութիւնն դեմ սկսվելիք ռազմական գործողութիւնների համար: Քաղաքացիական կռիւներին, Անտանտայի ինտերվենցիային, սպիտակ-գվարդիական չեկուլթների ժամանակ Սիրիի և Մանջուրիայի դեմ ռազմական գործողութիւնները կատարվում էին հենված այդ յերկաթգծի վրա:

3. Իմպերիալիստներն այդ պրովոկացիոն քայլով ուզում էին զրգուել Պորհրդային Միությունը պատերազմի դուրս գալ Չինաստանի դեմ, վորն առիթ կլիներ իմպերիալիստների նոր ինտերվենցիայի, և այդպիսով սոցիալիզմի շինարարությունը կխանդարվեր ու կհետաձգվեր:

4. Վորովհետև Չինաստանում հեղափոխական շարժումը վարոշ գաղարից հետո նորից աշխուժանալու նշաններ ե ցույց տալիս, վոր հակաօրմպերիալիստական տրամադրությունները միշտ վառ են, այս կոնֆլիկտն ստեղծելով՝ իմպերիալիստները և միլիտարիստները հնարավորություն էին ստեղծում մասսաների ուշադրությունն ուրիշ կողմ գարծնել, հրահրել մոնր-րուրթուաղիայի նացիոնալիստական կրքերը, և բարձրացնել Նանկինի կառավարության հեղինակությունը, վոր վերջին տարիների իր արյունոտ քաղաքականությամբ աշխատավորական լայն մասսաների առիությանն և արժանացել:

5. Վոչ մի միջոցով Չինաստանի միացումը պլուխ չկարողանալով բերել, այժմ Նանկինի կառավարությունն իր հույսը

Գրել ե չինական գեներալների և Սորհըր-
 գային Միութեան միջև սկսվելիք մի պա-
 տերազմի վրա, այն նկատառումով, վոր
 դժվարութեաններն և պատերազմի զեպքում
 Մուկղենի կառավարութեանը, վոր վորոշ
 չափով անկախ ե Նանկինի կենտրոնական
 կառավարութեանից, ստիպված կլինի դի-
 մել Նանկինի զինվորական և ֆինանսական
 ոգնութեան, և այդպիսով կարելի կլինի
 վերջնականապէս Մանջուրիայում ամրաց-
 նել կենտրոնական իշխանութեան ազդեցու-
 թեանը: Այդ հանդամանքն առանձնապէս
 շեշտում ե չապոնական մամուլը: «Նանկի-
 նի կառավարութեանը, — գրում են այդ թեր-
 թերը, — դիտավորյալ կերպով վատթարաց-
 նում ե կացութեանը, վարպեսզի այդ պա-
 տերովակով Մուկղենին զրկեն զիվանագիտա-
 կան բանակցութեաններ վարելու իրավուն-
 քից»: Այս նշանակում ե, վոր յեթե միաց-
 ման խնդրում մուկղենյան, թե նանկինյան
 խմբավորութեաններն միջև տարածաչնու-
 թեան չկա, այդ առիթն ոգտագործվում ե
 չերկու խմբակցութեաններն կողմից ել ի-
 բնեց զիրքերն ուժեղացնելու նպատակով:

ԿՈՆՖԼԻԿՏԸ ՍՐՈՒՄ Ե ՀԵԿԸՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իմպերիալիստներին և չին գեներալնե-
րին թվում էր, Վոր Զին-Արևելյան չերկաթ-
գիծը մի պատառ է, Վոր հեշտ կարելի չէ
կուլ տալ: Այստեղ, սակայն, նրանց հաշիվ-
ներն սխալ դուրս յեկան: Գրավման հա-
ջորդ որն իսկ սուր կերպով հակադրվեցին
իմպերիալիստական պետութուններին, ինչ-
պես և չինական գեներալների շահերը: Մենք
տեսանք, թե ինչպես այս առիթից ոգաը-
վում է Նանկինի կառավարութունը՝ Մուկ-
գենին իր ազդեցութւան յենթարկելու հա-
մար: Մյուս կողմից չսպոնական մամուլը
հաղորդում է, Վոր անհավանական չէ քա-
ղաքացիական կռիվների վերսկսումը Զի-
նաստանում, Վորովհետև Զան-Սու-Լյանը
(Մուկգենի կառավարութւան պիտը) բլոկ
է կ սզմել միքանի գեներալների հետ Զան-
Կաչ-Շիի (Նանկինի կառավարութւան պե-
տին) դեմ: Թեկուզ և ամբողջովին ճիշտ չլի-
նի այս ինֆորմացիան, սլարզ և, Վոր տա-
րածաչնությունները չերկու կառավարու-
թյունների միջև նույնքան սուր են, ինչքան
միքանի տարի առաջ, Վոր «միացման»

կեղծ վարագուրի յետևում գեներալական չուրաքանչյուր խմբավորում իր անկախությունն և պահում և պատրաստվում և ակտիվ չեղուցթի:

Սակայն ավելի սուր կերպով արտահայտվում են իմպերիալիստների հակամարտությունները: Չին. Արևելյան յերկաթգծի շուրջը միմյանց են բաղխվում չորս մեծ պետությունների՝ Անգլիայի, Ամերիկայի, Յապոնիայի և Ֆրանսիայի շահերը:

Այդ դուրքան առանցքի անգլո-ամերիկյան յեղյապոն-ամերիկյան անսագոնիզմն է:

ՅԱՊՈՆ-ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԲՅՈՒՄԸ

Իմպերիալիստների ինչպիսի քաղաքական և տնտեսական փոխհարաբերություններ կան Մանջուրիայում և Չինաստանում:

Առաջին տեղը զբաղում և խաղաղ ովկիանոսի սլորելիմը, թե ով գերիշխող պետք է լինի այդ ովկիանոսում, ալսինքն ով ամենից շատ ապրանք է վաճառելու, կապիտալ և շահագործելու Չինաստանում:

Անգլիան առաջին պետություններից մեկըն է, վոր դեռևս հիսունական թվականներին, աֆրոնի պատերազմից հետո, մուտք

գործեց Չինաստան և սկսեց դադուխացման իր քաղաքականությունը:

Իննսունական թվականներին չին-չապոնական պատերազմից հետո նրա որինակին հետևեց Յապոնիան: Յապոնիայի ազդեցությունն ավելացավ մանավանդ իմպերիալիստական պատերազմի ընթացքում, չերբ Յապոնիան գրավեց Չինաստանի գերմանական դադուխները: Հետագայում, մանավանդ Չան-Յո-Լինի (Մուկդենի նախկին դիկտատոր) սրժք, Յապոնիան իրրև տեր ու տիրական հաստատվում և Մանջուրիայում: Մի տեսակ ազդեցության շրջանակների բաժանում է լինում, Անգլիան Հարավային Չինաստանում, Յապոնիան Մանջուրիայում:

Դեպի Չինաստան ամենից ուշը իր շոշափուկները չերկարացրեց Ամերիկայի Միացյալ Նահանգները, սակայն հիմնավոր և խոր կերպով, մանավանդ իմպերիալիստական պատերազմից և քաղաքացիական կռիվների դադարից (1927 թ.) հետո:

Դեռևս 1924 թվին Չինաստանի արտաքին առևտրի 16 տոկոսն ընկել էր Ամերիկայի ձեռքը: Անգլիայինը կազմում էր 37 տոկոս և Յապոնիայինը՝ 24 տոկոս: 1927 թ.

միայն Ամերիկայի բաժինն է, վոր ավելացել է, իսկ մյուսներինը պակասել:

Հաջորդ տարիներում Նանկինի կառավարութ յունը՝ վոսով-զլխով անձնատուր չեղավ ամերիկյան կապիտալիզմին, ինչպես տեսանք նախորդ գլխում:

Շուկայի համար այս պայքարը չեք կարող չձայնալիլ նայել Մանչուրիայում յեւ Չին-Արեւիկայան յերկարգծի շուրջը:

Գրավելուց հետո անհրաժեշտ է, այդ գիծը շահագործել, կապիտալներ ելին հարկավոր: Ո՞վ էր արամազրելու այդ կապիտալները և հետևաբար ո՞վ էր իր կոնտրոլին յենթարկելու այն: Այստեղ հակադրվում են Ամերիկայի և անգլո-չապոնական կապիտալիստները: Հգոր մրցակցի հանդեպ վարո՞ւ խնդիրներում հակադիր Յապոնիան յեւ Անգլիան սխալված են գործակցել՝ խանգարելու համար նրա առաջադաշումը Չինաստանում: Ամերիկյան ինպերիալիզմի ծավալումը ճնշական յեւ ուզմական վստեգներով սպառնալից է Յապոնիայի, ինչպես նայել Անգլիայի համար:

ՆՍԵՐԻԿԱՆԻ ՄԻՋՆՏՈՒԹՅՈՒՆԸ

Յերկաթգծի գրավումից հետո ստեղծված գրութչունից զուրս գալու համար Միացյալ Նահանգների կառավարութչունը նախաձեռնութչուն վերցրեց: Հուլիսի 25-ին Միացյալ Նահանգների արտաքին գործերէ մինիստր Ստիմսոնը դիմեց Անգլիայի, Յապոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի ներկայացուցիչներին, առաջարկելով կոնֆլիկտը հարթելու համար մի հատուկ հանձնաժողով ստեղծել: Հայտարարեց վարագուրված ձեվով առաջարկվում ե, վոր հիշյալ պետւթյուններն ոգնեն Չինասանին յես գնելու Չին-Արեվելյան յերկարուղին:

Բուրժուական բազմաթիվ թերթեր սուսմ են, վոր Ստիմսոնի դիմումը քողարկված մի փորձ է՝ յերկարուղին գցելու ամերիկյան բանկիրների ձեռքը:

Վերցնելով իր ձեռքը այդ կարևոր յերկաթուղին՝ Ամերիկան սարսափելի հարված կտար Յապոնիային: Ահա թե ինչու ամերիկյան առաջարկը համակրական արձագանգ չգտավ Յապոնիայի և Անգլիայի կող-

մից: Միայն Ֆրանսիան եր, վոր վորոշ չա-
 փով միացավ Եմբրիկյան առաջարկին: Այդ
 հասկանալի չե, վորովհետև Ֆրանսիան, իբրև
 գլխավոր բաժնետերերից մեկը ուսս-ասիա-
 կան բանկի, ինչպես նաև գլխավոր պար-
 տատերը ցարական Ռուսաստանի, հույս ու-
 նի միջազգային կոնցրոլ հաստատելու դեպ-
 քում վորոշ գումարներ ստանալ ի հասուցումն
 հին պարսկերի:

Չին-Արևելյան յերկաթգծի կոնֆլիկտի
 լուծման համար խորհրդային իշխանության
 տեսակետը պարզ և և արտահայտված և այն
 նոտայում, վոր ընկեր կարախանի կողմից
 հուլիսի 13-ին ներկայացվեց շինական կա-
 ոավարութչան: Կոնֆլիկտի լուծման հիմք
 կարող են լինել միայն խորհրդային հետևյալ
 առաջարկները.

1) Անմիջապես կոնֆերենցիա հրավիրել
 Չին-Արևելյան յերկաթուղու հետ կապված
 խնդիրների կարգավորման համար:

2) Չինական իշխանութչուհներն անմի-
 ջապես պետք և վերացնեն իրենց ինքնա-
 գլուխ գործողութչուհները Չին-Արևելյան
 յերկաթուղու վերաբերմամբ:

3) Բոլոր ձերբակալված խորհրդային քա-

դաքացիներն ազատվում են, և չինական իշխանությունները դադարեցնում են բոլոր հալածանքներն ու ճնշումները թե խորհրդային քաղաքացիների և թե խորհրդային հիմնարկների վերաբերմամբ (ընկ. Կարախանի նոտալից):

Իհարկե այս առաջարկներն սկզբում մերժվեցին: Չինական իշխանությունները համաձայնեցին բանակցություններ սկսել, պայմանով, վոր ներկա գրությունը պահպանվի: Նրանք այդպիսով ուզում էին, վոր խորհրդային իշխանությունն ընդունի կասարված վիասը:

ՄԻՋԱՉԳԱՆՆԵՆ ՊՐԱՆՏԱՐԻԱՏԻ ԲՈՂՈՔԸ

Սակայն նրանք կհրական մերժման միայն հանդիպեցին:

Դրանից հետո չինական գեներալների ակտիվ յեւուլթները, զինված հարձակումները մեր տերրիտորիայի վրա շատացան: Բայց չինական-գեներալների վարձկաններն յեւ սպիտակ-գվարդիական ավազակները իրենց գլուխը ջարդեցին ներոսական Կարմիր բանակի դեմ:

Ռազմահեղափոխական Սորհրդի հրամա-

նով կազմակերպվեց Հեռավոր Արևելքի հատուկ բանակ մետալլիստ բանվոր և կարմիր բանակի հերոս ընկեր Բլյուխերի հրամանատարութեամբ: Ամեն ուր կորհրդաչին Միութեան զանազան մասերից բանվորներն ու աշխատավոր գյուղացիները հազարավոր դիմումներ են տալիս իբրև կամավոր այդ բանակին մասնակցելու համար: Ամբողջ աշխարհում բողոքի և զայրույթի մի հսկա ալիք բարձրացավ իմպերիալիզմի և միլիտարիզմի այս ավանտյուրայի դեմ: Միլիոնավոր պրոլետարական մասսաներ վոսֆի կանգնեցին հանուն խորհրդային հայրենիքի, պրոլետարական դիկտատուրայի յերկրի պատկանության: Հակապատերազմյան Միջազգային Կարմիր ուրվերաձևից մի հուժկու յելույրի, ընդդեմ հակախորհրդային պատերազմի պատրաստության:

Քաղաքական այսպիսի պայմաններում էր, վոր իմպերիալիստներն ու միլիտարիստներն ստիպվեցին նահանջել:

Մի կողմից խորհրդաչին կառավարութեան վճռական հաստատակամութունը, մյուս կողմից միջազգային պրոլետարիատի ազդարարութունն այն մասին, վոր թույլ

չի տա հարձակվելու ԽՍՀՄ դեմ, և վերջապես իմպերիալիստաների և չինական միլիտարիստաների բազմաթիվ հակամարտությունները կոնֆլիկտը լուծելու ուրիշ յեւթ չնչին թողնում, բայց յեթե զիջումների ուղին, խորհրդային առաջարկներին հիման վրա:

Այդպես եւ չեղած:

ԳՐԱԿԱՆՔԵՐԻՆ ԹՇՆՆՄԻՆ ՆԱՀԱՆՋՈՒՄ ԱՒ ՄԱՆՆՈՒՄ Ե

Ոգոստոսի 28-ին, Մոսկվայի պերմանանական դեսպան ֆոն Դիրկսենի միջոցով արագորժժողկոմի տեղակալ ընկ. Լիտվինովին հանձնվեց չինական կառավարութւան նոտան և առաջարկը կոնֆլիկտը լուծելու համար բանակցություններ վերսկսելու, ձերբակալվածներին ազատ արձակելու, գծի խորհրդային նոր վարչություն նշանակելու և այլնի մասին:

Չինական կառավարութւան առաջարկով Չին-Արևելյան չերկաթգծի վրա համարյա պետք ե վերահաստատվեր նախկին դրությունը, վորից հետո բանակցություններն սկսվելին Մուկղենի և Պեկինի պայմանագրի

ըի հիման վրա, վորով չինական կառավարությունն իրավունք ունի յետ գնեկու չերկաթգծի խորհրդային բաժինը:


Խորհրդային կառավարությունը վորոշ փոփոխություններով ընդունեց Չինաստանի առաջարկը:


Կասկած չկա, վոր իմպերիալիստներն ու չինական միլիտարիստները այս զիջումը չերբեք չի նշանակում, վոր նրանք յետ հնկանգնում հակախորհրդային պատերազմի նախապատրաստության իրենց նպատակներից: Ներկա նահանջը միայն բղխում է քաղաքական այն աննպաստ կոնյունկտուրայից, վոր գոյություն ունի «ստաբիլիզացիայի յանձարկված» կապիտալիզմի ներքին հակասությունների յեւ վերոհիշյալ մյուս պատճառների հետեւանքով:

Նահանջող դոսակարգային թշնամին հետազայում ևս պիտի ոգտվի ամեն մի առիթից՝ նոր դժվարություններ, նոր կոնֆլիկտներ ստեղծելու և հնարավոր դեպքում հակախորհրդային պատերազմ սկսելու համար: Այս բոլորը պարտադրում է մեզ լինել միշտ պատրաստ՝ հակահանդիմաժ տալու համար ներքին յեւ արտաքին դաժակար-

գային թշնամուն: Այդ հակահարվածն այն-
քան ավելի ուժեղ կլինի, ինչքան մեծ թա-
փով առաջ կտանենք յերկրի ինդուստրիաց-
ման, գյուղի սոցիալիստական վերակա-
ռուցման, կուլտուրական հեղափոխության,
յերկրի պաշտպանության գործը:

Այդ սւղղությամբ դնու՞մ են և պիտի
դնան մեր աշխատանքները:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035569

-024.

9160 ~~28~~

A $\frac{I}{1507}$

ԱԿԿ
օրինակ

